Հաստատված է

Փարպի համայնքի ավագանու

10.11.2016 թ. N 50 որոշումով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2016

Բովանդակություն

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....3

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն 4

2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն 4

2.2.Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....5

2.3.Համայնքում իրականացվող ծրագրերը..... **Ошибка! Закладка не определена.**6

2.4.Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները**Ошибка! Закладка не определена.**7

2.5.Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ..... **Ошибка! Закладка не определена.**9

2.6.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 10

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում**Ошибка! Закладка не определена.**11

3.1.Համայնքի զարգացման տեսլական ..... **Ошибка! Закладка не определена.**12

3.2.Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ..... **Ошибка! Закладка не определена.**13

4.ՀՀԶԾ ֆինանսավորում 16

5.ՀՀԶԾ մոնիթորինգ ..... **Ошибка! Закладка не определена.**17

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հարգելի հայրենակիցներ

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպիի համայնքապետարանը նախկին քառամյա ծրագրի շրջանակներում կատարել է իր վրա դրված պարտավորությունները, որոնց ականատեսն եք եղել դուք և իրազեկվել եք համայնքի ավագանու որոշումներով, բյուջեի եռամսյա հաշվետվություններով: Սակայն ծրագիրը բավարար չէր բնակչության բարեկեցության բարձրացման և համայնքին կայուն զարգացում ապահովելու համար: Այդ պատճառով հաշվի առնելով հանրային բաց լսումներում ձեր առաջարկությունները, համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը, առկա հիմնախնդիրները, տնտեսական, ֆինանսական, բնական ու մարդկային ռեսուրսները, դրանք քննարկելով համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների և ավագանու համատեղ նիստերում, համայնքի ավագանու կողմից ընդունվել է ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի հնգամյա(2017 – 2021 թթ.) զարգացման ծրագիրը (ՀՀՀԶԾ Ծրագիր):

Ծրագրի հիմնական ուղղություններն են

1. Բժշկական ամբուլատորիայի նոր շենքի կառուցում
2. Սպորտդահլիճի կառուցում
3. Մարզասրահի կապիտալ նորոգում
4. Մանկական երկու խաղահրապարակների կառուցում
5. Հոգեհանգստի և հանդիսությունների շենքի կառուցում
6. Համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և կապիտալ նորոգում
7. Ոռոգման համակարգի ջրագծերի կառուցում և կապիտալ վերանորոգում
8. Համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացում
9. Խմելու ջրագծերի կապիտալ և ընթացիկ նորոգում
10. Գյուղապետարանի շենքի առաջին հարկի ընթացիկ և կապիտալ նորոգում
11. Գյուղապետարանի շենքի գույքի ձեռքբերում
12. Մշակույթի տան ընթացիկ և կապիտալ նորոգում
13. Մշակույթի տան գույքի ձեռքբրում
14. Մանկապարտեզի գույքի ձեռքբերում

Այս ծրագրի գերակա ոլորտներն են.

1. Բնակչության առողջության և կենցաղային մակարդակի բարձրացում
2. Գյուղատնտեսության զարգացում
3. Մատաղ սերնդի դաստիարակություն
4. Սպորտի զարգացում
5. Զբոսաշրջության զարգացում

Առողջապահության բնագավառում կարևոր է նոր բուժամբուլատորիայի կառուցումը՝ հնարավորության դեպքում մի քանի մահճակալներով: Կարևոր խնդիր է նաև համայնքում կոյուղու կառուցումը:

Գյուղատնտեսության զարգացման հարցում կարևոր է ոռոգման նոր ջրագծերի և ջրատարների կառուցումը և հների վերանորոգումը.

Մատաղ սերնդի դաստիարակության հարցում կարևոր է արդեն կապիտալ վերանորոգվող մանկապարտեզի գույքի ձեռքբերումը.

Սպորտի զարգացման համար առաջնահերթ է համայնքում կառուցված ֆուտբոլի դաշտին կից սպորտդահալիճի կառուցումը և մարզասրահի(тренажерный зал) կապիտալ վերանորոգումը.

Սակայն ծրագրի իրականացման համար առկա են բազմաթիվ խոչնդոտներ.

1. Համայնքի բյուջեում սեփական եկամուտների փոքր բաժին
2. Բնակլիմայական պայմաններ
3. Գյուղատնտեսության ապահովագրության բացակայություն
4. Ոռոգման ջրի,դիզվառելիքի, պարարտանյութերի, բուժանյութերի բարձր գին
5. Ներդրումների բացակայություն

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքը գտնվում է Արագած լեռան ստորոտում, մարզկենտրոն Աշտարակ քաղաքից հարավ արևմուտք 6 կմ, Երևան քաղաքից 22 կմ հեռավորության վրա: Ծովի մակարդակից գտնվում է 1050 - 1150 մ բարձրության վրա:

Զբաղեցնում է 892,6 հա տարածք: Բնակչությունը հիմնականում տեղացիներ են, կան նաև այլ ազգեր և փախստականներ:

Բնակչության թիվը 2016 թ. հունվարի 1 –ի դրությամբ կազմում է 2458 մարդ,որից՝
Տղամարդ - 1279
Կին - 1179
Այլ ազգերից կան.
Եզդիներ – 60
Ռուսներ - 4
Հույն - 1

Համայնքում կան փախստականներ՝ երեք ընտանիք, որոնցից երկուսը պետության կողմից ապահովվել են բնակարաններով, իսկ մեկ ընտանիք ժամանակավոր գտնվում է ՌԴ-ում:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի 2017 թ-ի վարչական բյուջեն կազմում է 50000,0 հազ. դրամ, որտեղ համայնքի սեփական եկանուտների բաժինը կազմում է 25%, իսկ ընդհանուր բյուջեն ֆոնդային բյուջեի հետ միասին կազմում է 102 215,0 հազար դրամ, դեֆիցիտը կազմում է 6 883,0 հազար դրամ:

Համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ չեն գործում : Գործում էր մեկ տուֆ քարի հանքավայր, որը բիզնես տեսակետից շահավետ չլինելու պատճառով արդեն երկու տարի է չի գործում: Համայնքում կա դիատոմիտի հանքավայր, որը չի շահագործվում:

Ծառայությունների մատուցման գծով. Համայնքում <<Էկո-Կենտրոն>> ՍՊԸ կողմից կատարվում է աղբահանություն, << Փարպի>> ՋՕԸ կողմից՝ ոռոգման ջրի մատակարարում: Համայնքում գուծում են վեց փոքր խանութներ : Համայնքը գազաֆիկացված է :

Համայնքում գյուղատնտեսության բնագավառում առաջատար ճյուղ է պտղաբուծությունը,որին բաժին է ընկնում գյուղատնտեսական արտադրանքի մոտ 50%, մնացածը բաժին է ընկնում բանջարաբուծությանը և անասնապահությանը: Ցածր մակարդակի վրա է խաղողագործությունը և դաշտավարությունը: Լինելով Երևան քաղաքին մոտ, գյուղատնտեսական արտադրանքի հիմնական մասը սպառվում է Երևան քաղաքի շուկաներում և խանութներում:

Փարպի համայնքը հարուստ է զբոսաշրջային մեծ հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակույթային հուշարձաններով (քարե դռներով քարանձավներ, մ.թ.ա. երրորդից երկրորդ հազարամյակի պատմական հուշարձաններ՝ Վերին և Ներքին Նավեր, ամրոցներ, դամբարանադաշտեր): Գյուղի տարածքում կա տարբեր դարերում կառուցված յոթ եկեղեցի, ևս յոթ եկեղեցիների ավերակներ: Բարերար՝ համագյուղացի Բաբկեն Առաքելյանի միջոցներով վերակառուցվել են << Սբ. Գրիգոր>> (յոթերրորդ դար)և <<Թարգմանչաց>> (հինգերորդ դար) եկեղեցիները, որոնք հանձնվել են մայր եկեղեցու տնօրինությանը: Որոշակի ներդրումների դեպքում Փարպի համայնքը ունի մեծ պոտենցիալ զբոսաշրջային կենտրոն դառնալու համար,որում իր ուրույն տեղը կունենա <<Արծվի թևեր>> կոչվող հանգստյան գոտին:

Փարպի համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց՝ ուր հաճախում են համայնքի 215 աշակերտ: Դպրոցը կառուցվել է 600 աշակերտների համար: Դպրոցում գործում է նաև նախակրթարան,ուր հաճախում է 25 երեխա:

Համայնքում գործում է մեկ բժշկական ամբուլատորիա, որը վերջին անգամ վերանորոգվել է 2005թ. բարեգործ Բաբկեն Առաքելյանի միջոցներով: Այժմ գտնվում է վթարային վիճակում: Բուժ ամբուլատորիան գործում է ընտանեական բժշկության ծրագրով, սակայն շենքային պայմանները(սենյակների քանակը, բժշկական սարքավորումները) բավարար չեն իրականացնելու լիարժեք բժշկական սպասարկում: Այն նախատեսված է սպասարկելու Փարպի, Բազմաղբյուր, Ղազարավան համայնքների 3559 բնակիչների: Տարեկան այցելուների թիվը կազմում է 6134 հիվանդ:

Համայնքում ընտանեկան նպաստների համակարգում և սոցիալական ծրագրերում ընդգրկված են 55 ընտանիք:

2.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Համայնքում պետության կողմից շարունակվող ծրագիր է մանկապարտեզի կապիտալ նորոգումը,որը կավարտվի 2017թ. երկրորդ կիսամյակում: Սա շատ սպասված ծրագիր է ոչ միայն Փարպի, այլև Բազմաղբյուր և Ղազարավան համայնքների բնակիչների համար, քանի որ մանկապարտեզը ժամանակին սպասարկել է նաև այդ համայնքների երեխաներին: Վերանորոգումից հետո մանկապարտեզ կհաճախեն երեք գյուղի մոտ 105 երեխա:

Համայնքում գալիք հինգ տարիների համար պետության աջակցությամբ կամ այլ ծրագրերով նախատեսվում է կառուցել նոր բժշկական ամբուլատորիա մի քանի մահճակալներով: Ծրագրի իրականացման համար համայնքը պատրաստ է կատարել իր ներդրումը և ֆինանսապես և նյութապես: Նոր ամբուլատորիայի կառուցումը մեծ ազդեցություն կունենա բնակիչների առողջական մակարդակի բարձրացման վրա:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված է այլ ծրագրերով կառուցել ոռոգման նոր ջրոգծեր և վերանորոգել հները: Այս ծրագրի իրականացման արդյունքում ոռոգման ջրի կորուստները կհասցվի մինիմումի և կավելացվի ոռոգվող տարածքների, մշակվող հողերի քանակը, կբարձրանա բնակչության զբաղվածության աստիճանը:

Համայնքի զարգացման համար մեծ ազդեցություն կունենա Հյուսիս – Հարավ ավտոճանապարհի Փարպիի հատվածի կառուցումը:

Տրանսպորտի զարգացման համար ՀՀ նախագահի նախընտրական ծրագրով նախատեսված է 2017թ-ին պետ բյուջեի հաշվին կապիտալ վերանորոգել Փարպի, Բազմաղբյուր և Ղազարավան միջհմարզային ճանապարհի 7,5 կմ հատվածը, որը կբարելավի տրանսպորտի վիճակը:

Արտասահմանյան << Բիլ և Վալերի Հաքներ>> բարեգերծական կազմակերպության կողմից համայնքի մեկ թաղամասում (Գր.Լուսավորիչի փողոցի և Դ.Տեր-Մկրտչյան փողոցի մի հատվածի՝ 1600 մետր) կկառուցվի խմելու նոր ջրագիծ:

Համայնքում շարունակական ծրագիր է Կուրջակեան ընտանիքի կողմից << Հավաք>> ծրագրի իրականացումը, որի նպատակն է ընտանիքի սեփականությունը համարվող 12 հա հողատարածում կառուցելու մոտ 100 բնակարան: 2016թ. կառուցվել է 3 բնակարան, նախատեսվում է 2017թ. կառուցել ևս 5 և ավելի բնակարան:

Կա պայմանավորվածություն մասնավոր ընկերությունների և անհատ սեփականատերերի հետ մոտակա հինգ տարիներին իրենց սեփական հողատարածքներում 50 հա այգի հիմնելու համար:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի 2017 թ. բյուջեն կազմվել է ելնելով համայնքի զարգացման հնգամյա պլանից:

1. Համայնքի բյուջեն եկամուտների մասով կազմում է – 95 332,0 հազար դրամ
2. Ծախսային մասով բյուջեն կազմում է – 102 215,0 հազար դրամ
3. Դեֆիցիտը՝ 6 883,0 հազար դրամ

Համայնքում ծրագրերի իրականացման համար կանխատեսվում է.

1. Մանկապարտեզի կապիտալ վերանորոգման ծախսերը կազմում է 195 000,0 հազար դրամ, իսկ համայնքի ներդրումը կազմում է 13 000,0 հազար դրամ: Վերանորոգումը կավարտվի 2017 թ. երկրորդ կիսամյակում:
2. Մանկապարտեզի գույքի ձեռքբերման համար 2017 թ. նախատեսվում է 13 000,0 հազար դրամ, որից համայնքի ներդրում կկազմի 3 000,0 հազար դրամ:
3. Գր. Լուսավորիչի և Դ, Տեր Մկրտչյան փողոցների խմելու ջրագծերի կապիտալ վերանորոգման համար << Բիլ և Վալերի Հաքրներ>> բարեգործական կազմակերպության կողմից տրամադրված 6 146,620 հազար դրամ գումարից 400,0 հազար դրամը կներդնի համայնքը:
4. Նոր բուժամբուլատորիայի կառուցման համար համանքը նախատեսել է 6 000,0 հազար դրամ: Մնացած գումարի ֆինանսավորման հարցը դեռևս լուծված չէ:
5. Համայնքի << Թաքյուհանդ>> կոչվող հանդամասի մայր առվի կապիտալ նորոգման համար համայնքը նախատեսել է 6 000,0 հազար դրամ գումար: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարվելու է 2017 թ-ի Ասիական բանկի ներդրումային ծրագրով: Ընդհանուր գումարը՝ 70 000,0 հազար դրամ:
6. 2017 թ-ին նախատեսված է կապիտալ վերանորոգել Փարպի, Բազմաղբյուր, Ղազարավան միջմարզային 7,5 կմ ճանապարհը, պետբյուջեի հաշվին , համաձայն նախագահի նախընտրական խոստման:
7. Համայնքում սպորտդակլիճի կառուցման համար նախատեսվում 120 000,0 հազար դրամ, ֆինանսավորման աղբյուրը լուծված չէ: Համայնքի բյուջեից 2018 թ. նախատեսվում է ներդնել 9 000,0 հազար դրամ:

Համայնքում առաջիկա հինգ տարիներին կանխատեսվում է.
2017 թ. - 95 332,0 հազար դրամ
2018 թ. – 80 000,0 հազար դրամ
2019 թ. - 82 000,0 հազար դրամ

2020թ. – 83500.0 հազար դրամ
2021թ. – 8500.0 հազար դրամ

Ծանոթություն - 2017 թ. բյուջեում ֆոնդային բյուջեի գումարը կազմում է 45 332,0 հազար դրամ.

Կանխատեսումները արվել են ելնելով սեփական եկամուտների ավելացման, անշարժ գույքի, օտարումից, հողերի նպատակային նշանակության փոփոխությունից և պետբյուջեից տրվող ներքին դոտացիայի ավելացման հաշվին:

2.5 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փարպի հանայնքի զարգացման հնգամյա ծիագրի իրականացման համար առկա են բազմաթիվ խոչնդոտներ և դժվարություններ, որոնք կարծես փոխկապակցված լինեն միմյանց հետ և ծրագրի մի խնդրի լուծումը կարող է օգնել նաև մյուսների լուծման գործընթացին:

Այսպես՝ գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը կարող է բերել գյուղատնտեսության զարգացմանը,որտեղ հիմնական խոչընդոտներն են .

1.Տեխնիկայի բացակայություն

2. Մասնագետների պակաս

3. Հողերի ցածր բերիություն

4.Ֆինանսների անբավարարության պատճառով ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման անհնարինություն.

5. Ոռոգման ջրի բարձր սակագին

6.Ոռոգման ցանցում ջրի մեծ կորուստներ

7.Բուժանյութերի պիտանելիության անբավարարություն

8.Արտադրանքի իրացման դժվարություններ

9.Հակակարկտային կայանների պակաս

10.Տրամադրվող վարկերի բարձր տոկոս

Այս խոչընդոտները մեղմելու դեպքում գյուղատնտեսությունը կարելի է հասցնել այնպիսի մակարդակի, որը հնարավորություն կտա ավելի արդյունավետ դարձնել հողերի օգտագործումը, կբերի համայնքի կայուն զարգացման, կստեղծվեն նոր աշխատատեղեր, կներդրվեն հողերի մշակման նոր տեխնոլոգիաներ, կբարձրանա բնակչության կենսամակարդակը, կավելանա համայնքի սեփական եկամուտները, կհեշտանա հարկերի և տուրքերի հավաքագրումը,որն էլ կնպաստի բիզնես միջավայրի բարելավմանը և կոոպերացիաների ստեղծմանը:

Բնակչության առողջության մակարդակի բարձրացման գործում կարևոր նշանակություն ունի նոր բուժամբուլատորիայի կառուցումը, որը հնարավորություն կտա տրամադրել ավելի արդյունավետ և մատչելի սպասարկում: Հին ամբուլատորիան սպասարկում է Փարպի, Բազմաղբյուր,Ղազարավան համայնքների 3500 բնակչի: Վերջին անգամ այն վերանորոգվել է 2005 թ.: Այժմ այն գտնվում է վթարային վիճակում : Բուժսպասարկում իրականացնելու համար խոչնդոտ է հիվանդասենյակների, բժշկական սարքավորումների պակասը: Նոր բուժամբուլատորիայի կառուցման համար խոչնդոտ է նաև ֆինանսավորման բացակայությունը , որի հարցը դեռևս լուծված չէ:

Համայնքում զբոսաշրջության զարգացման համար կան նպաստավոր պայմաններ (պատմամշակույթային հուշարձաններ, եկեղեցիներ, հանգստի գոտի): Զարգացման համար մեծ խոչնդոտ է ներդրումների բացակայությունը: Այս հարցում կարևոր է բարեգործության խթանումը և այլ ծրագրերի ներգրավումը:

Համայնքում սպորտի զարգացման համար մեծ նշանակություն կունենա սպորտդահլիճի կառուցումը և մարզասրահի կապիտալ նորոգումը, որի համար խոչնդոտ է բարեգործական, մասնավոր և պետական ներդրումների բացակայությունը:

Մատաղ սերնդի դաստիարակության գործում մեծ նշանակություն ունի նոր հիմնանորոգվող մանկապարտեզի գույքի ձեռքբերումը:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1.1 Երևան քաղաքին մոտ լինելը

1.2 Արզնի- Շամիրամ ոռոգման ջրանցքի առկայությունը

1.3 Միջմարզային ճանապարհների բավարար վիճակ

1.4 Գյուղատնտոսության զարգացման մեծ հնարավորություն

1.5 Հյուսիս – Հարավ ճանապարհի կառուցումը

2. Համայնքի թույլ կողմերը

2.1 Հողերի ցածր բերիություն

2.2 Գյուղատնտեսական տեխնիկայի և մասնագետների պակաս

2.3 Վարկերի բարձր տոկոսներ

2.4 Ոռոգման ջրի բարձր սակագին

2.5 Դիզելային վառելիքի, պարարտանյութերի, բուժանյութերի բարձր գին

2.6 Գյուղատնտեսական մթերքների իրացման շուկաների փոքր հնարավորությունները

2.7 Արտադրական և վերամշակող ձեռնարկությունների բացակայությունը

3 Համայնքի հնարավորությունները

3.1 Բնակլիմայական բարենպաստ պայմաններ գյուղատնտեսական կուլտուրաների լայն տեսականու արտադրության համար

4. Համայնքի սպառնալիքները.

4.1 Կարկտահարության և ցրտահարության սպառնալիք.

4.2 Ոռոգման համակարգի ոչ բավարար վիճակ.

3.ՀԱՄԱՅՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Փարպի ՀՀՀԶԾ նպատակների և գործողությունների, սահմանման, անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման հերթականությունը



3.1 ՀԱՄՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի զարգացման ծրագիրը կազմված է առաջիկա հինգ տարիների համար և փոփոխություններ սպասվում են այդ տարիների ընթացքում:

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

1.Համայնքի բնակիչների առողջության մակարդակի բարձրացում: Այս հարցում կարևոր խնդիր է նոր բժշկական ամբուլատորիայի կառուցումը, որի համար համայնքը նախատեսել է իր մասնաբաժինը: Դեռևս ֆինանսավորման հարցը լուծված չէ:

2. Մատաղ սերնդի դաստիարակության հարցում կարևոր է մանկապարտեզի կապիտալ վերանորոգումը, որը նախատեսված է ավարտել 2017թ. երկրորդ կիսամյակում: Գումարը կազմում է 195 000 հազար դրամ, որտեղ համայնքի մասնաբաժինը կազմում է 13 000,0 հազար դրամ:

3. Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար կարևոր խնդիր է ոռոգման նոր համակարգերի կառուցումը և հների կապիտալ նորոգումը: Այս նպատակով համայնքը նախատեսել է իր մասնաբաժինը՝ 6,0 մլն դրամ: Մնացած գումարի հարցը կանխատեսվում է այլ ծրագրերով: Խնդրի լուծման դեպքում սպասվում է գյուղատնտեսության կայուն զարգացում:

4. Սպորտի զարգացման հարցում կարևոր է նոր կառուցված ֆուտբոլի դաշտին կից նոր մարզադահլիճի կառուցումը և մարզասրահի (тренажерный зал) կապիտալ նորոգումը: Համայնքը հայտնի է իր սպորտային նվաճումներով, որոնց հասել և այժմ էլ հասնում է չունենալով նորմալ պայմաններ: Համոզված ենք, որ սպորտդահլիճի կառուցումը և մարզասրահի կապիտալ նորոգումը, որով սպորտը ավելի մեծ մասսայականություն կունենա համայնքում, կբացվեն նոր աշխատատեղեր, կունենոնք ավելի առողջ երիտասարդություն և առաջնակարգ մարզիկներ:

5. Համայնքի զարգացման և կայուն եկամուտների ապահովման գործում կարևոր նշանակություն կունենա զբոսաշրջության զարգացումը,որի համար կան նպաստավոր պայմաններ:

Համայնքի կայուն զարգացման գործում կարևոր խնդիրներ են նաև համայնքի ներհամայնքային ճանապարհների կապիտալ նորոգումը, փողոցների լուսավորության անցկացումը,մշակույթի տան և գյուղապետարանի գույքի ձեռքբերումը:

Համանքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացումը նախատեսում է անհրաժեշտ ռեսուրսները, գործողությունները, ուղղակի արդյունքները, ծրագրի անմիջական և հեռահար նպատակները, որոնց ամբողջությունը ծրագրի տրամաբանական հենքն է.



ա/ համայնքում աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի նվազման - 8 %

բ/ Սեփական եկամուտների տարեկան աճի - 5 %

գ/ Բնակիչների թվի ավելացման - 1 %:

և կապահովեն համայնքի կայուն զարգացում:

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր պարտադիր խնդրի լուծման համար համայնքը սահմանել է անմիջական նպատակներ, որոնց իրականացումը կերաշխավորի համայնքի հեռահար նպատակների իրագործումը և համայնքին կբերի կայուն զարգացում:

Համայնքի զարգացման անմիջական նպատակներ են.

1.Համայնքի գույքի կառավարում .

2. Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.

3.Ակտիվ մշակույթային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ.

4. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն.

5. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում.

6. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.

7. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում.

8. պետության պաշտպանության իրականացման աջակցում.

9. Աղետի ռիսկերի նվազեցում և արտակարգ իրավիճակներում բնակչության ու քաղաքացիական պաշտպանության իրականացում.

10. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում.

11. Շրջակա միջավայրի պահպանություն.

12. Երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ.

13. Բնակչության առողջական մակարդակի բարձրացում.

14.Բարեգործության խթանում.

Ծրագրի անմիջական նպատակների չափելիությունն ապահովելու համար սահմանվել է կատարողականի առանցքային ցուցանիշներ և ցուցանիշների թիրախային արժեքներ, որոնք ներկայացված են ՀՀՌԾ ծրագրերի անձնագրերում:

1. Նոր բժշկական ամբուլատորիայի կառուցում.

   Ծրագրի իրականացման դեպքում կբարելավվի շենքային պայմանները, կներդրվի նոր ժամանակակից բժշկական սարքավորումներ, որը կնպաստի համայնքի և հարակից համայնքների բնակիչների բժշկական սպասարկման ծառայությունների որակը,կբարձրանա աճող սերնդի առողջ ապրելակերպի մակարդակը:
   Այս ծրագրի իրականացման համար նախատեսված է 120 000,0 հազար դրամ, որից համայնքի ներդրումը 2017 թ. բյուջեով նախատեսված է 6 000,0 հազար դրամ:

2. Սպորտդահլիճի կառուցում.
   Այս ծրագրի իրականացման համար համայնքը նախատեսում է կառուցված ֆուտբոլի դաշտին կից կառուցել նոր սպորտ դահլիճ , որը կնպաստի սպորտի և ֆիզկուլտուրայի էլ ավելի մասսայականացմանը, երիտասարդության դերի բարձրացմանը, զբաղվածության ավելացմանը, առողջ սերուդի դաստիարակմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:
   Ծրագրի գինը կազմում է 120 000,0 հազար դրամ: Նախատեսվում է ծրագիրը իրականացնել 2018 – 2021 թթ., իսկ համայնքի բյուջեից ներդրման գումարը կազմում է 9 000,0 հազար դրամ:

3. Մարզասրահի (тринажорный зал) շենքի կապիտալ նորոգում գույքի ձեռքբերում. Կապիտալ նորոգումը և գույքի ձեռքբերումը նախատեսվում է իրականացնել 2018 – 2021 թթ.: Բանակցություններ է գնում բարեգործի հետ ծրագրի իրականացման համար:

4. Հոգեհանգստի և հանդիսությունների շենքի կառուցում. Նախատեսվում է իրականացնել 2018 – 2021 թթ-ին.
5. Համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և կապիտալ նորոգում.

   Ծրագիրը հնարավորություն կտա համայնքում բարելավել տրանսպորտի վիճակը: Ծրագրի իրականացումը նախատեսվում է 2017 – 2018թթ.,: Այդ նպատակով համայնքի բյուջեից հատկացվել է 15 000,0 հազար դրամ:

6. Ոռոգման համակարգի ընթացիկ և կապիտալ նորոգում

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Ասիական բանկի բներդրումային ծրագրով: Այն հնարավորություն կտա համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը, համայնքին բերել կայուն զարգացում, բարձրացնել բնակիչների կենսամակարդակը, ստեղծել բիզնես միջավայր, խթանել

ձեռնարկատիրությունը: Ծրագրի գինը կազմում է 70 000,0 հազար դրամ: Նախատեսվում է ծրագիրը իրականացնել 2017 – 2019 թթ.: Համայնքի ներդրումը բյուջեից նախատեսվում է 6 000,0 հազար դրամ:

7.Ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացում

Ծրագրի իրականացումը կբարձրացնի բնակչության կենսամակարդակը: Ծրագրի գինը կազմում է 2 500,0 հազար դրամ, որը կտրամադրվի համայնքի բյուջեից:

8.Գյուղապետարանի շենքի ընթացիկ և կապիտալ նորոգում, գույքի ձեռքբերում

Ծրագրի իրականացումով կստեղծվի բարենպաստ աշխատանքային պայմաններ: Ծրագրի գումարն է՝ 2 000,0 հազար դրամ, որը կֆինանսավորվի համայնքի բյուջեից:

9.Մշակույթի տան ընթացիկ և կապիտալ նորոգում և գույքի ձեռքբերում

Ծրագիրը հնարավորություն կտա կազմել նոր խմբակներ,ընդգրկել ավելի շատ երեխաներ, բարձրացնել բնակչության մշակույթային մակարդակը, ստեղծել նոր աշխատատեղեր: Ծրագրի գինը կազմում է 7 300,0 հազար դրամ, որտեղ համայնքի բյուջեից նախատեսվում է 2100,0 հազար դրամ:Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 – 2018 թթ-ին:

10.Մանկապարտեզի գույքի ձեռքբերում

Ծրագիրը հնարավորություն կտա համայնքի և հարևան համայնքների երեխաների համար ստեղծել ավելի բարենպաստ պայմաններ: Ծրագրի գինը կազմում է 13 000,0 հազար դրամ: Համայնքի բյուջեից կտրամադրվի 3 500,0 հազար դրամ:

4.ՀՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Փարպի համայնքի ՀՀՀԶԾ – ում ընդգրկված ծրագրերն նախատեսված է իրականացնել .

1. Համայնքի սեփական միջոցներով.
2. Ներքին պաշտոնական դրամաշնորհներով.
3. Պետություն – համայնք – մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ.
4. Բարեգործություն և նվիրատվություն.
5. Այլ աղբյուրներ.

ՀՀՀԶԾ – ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար առկա և անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներկայացված են ՀՀՀԶԾ ծրագրերի ֆինանսավորման ամփոփաթերթում:

Համայնքը իր միջոցներով պատրաստ է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1.Ներհամայնքային ճանապարհների ընթացիկ և կարիտալ նորոգում, որի համար համայնքի վարչական և ֆոնդային բյուջեից 2017 – 2018 թթ. նախատեսել է 15 000,0 հազար դրամ: Ելակետային տարվա արժեքն է 15 000,0 հազար դրամ:

2. Ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացման համար 2017 – 2018 թթ. Համայնքի վարչական և ֆոնդային բյուջեից նախատսված է 2 500,0 հազար դրամ: Ելակետային տարվա արժեքն է՝ 2 500,0 հազար դրամ:

3. Գյուղապետարանի շենքի ընթացիկ և կապիտալ նորոգման, գույքի ձեռքբերման համար 2017 – 2018 թթ. համար համայնքի վարչական և ֆոնդային բյուջեից նախատեսված է 2 000,0 հազար դրամ: Ելակետային տարվա արժեքն է 2 000,0 հազար դրամ:

Պետություն – համայնք – մասնավոր հատված համագործակցության շրջանակներում, այլ ծրագրերով համայնքը նախատեսում է իրականացնել.

1. Բժշկական ամբուլատորիայի նոր շենքի կառուցում՝ գումարը - 120 000,0 հազար դրամ,որից համայնքի ֆոնդային բյուջեից – 6 000,0 հազար դրամ.
   այլ ծրագրերով – 120 000,0 հազար դրամ (գումարի հարցը լուծված չէ).

2.Սպորտդակլիճի կառուցման համար անհրաժեշտ գումար - 130 000,0 հազար դրամ

Համայնքի ֆոնդային բյուջեից – 9 000,0 հազար դրամ.

Այլ ծրագրերով – 130 000,0 հազար դրամ (գումարի հարցը լուծված չէ)

3.Ոռոգման ցանցի ընթացիկ և կապիտալ նորոգման համար գումարը – 70 000,0 հազար դրամ, որից .

համայնքի ֆոնդային բյուջեից – 6 000,0 հազար դրամ.

Ասիական բանկի ներդրումային ծրագրով մինչև 70 000,0 հազար դրամ.

4.Մանկապարտեզի գույքի ձեռքբերման համար գումարը – 13 000,0 հազար դրամ, որից

Համայնքի վարչական և ֆոնդային բյուջեից – 3 500,0 հազար դրամ

Այլ ծրագրերով – 9 500,0 հազար դրամ (ֆինանսավորման հաչցը լուծվածչէ)

5.Մշակույթի տան ընթացիկ և կապիտալ նորոգման, գույքի ձեռքբերման համար – 10 000,0 հազար դրամ, որից

Համայնքի բյուջեից – 2 100,0 հազար դրամ

Այլ ծրագրերով – 7 900,0 հազար դրամ (գումարի հարցը լուծված չէ).

5.ՀՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀՀԶԾ մոնիթորինգի ծրագիրը, մոնիթորինգի ենթարկվող ցուցանիշները,ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, տեղեկատվության աղբյուրներն ամփոփված է ՀՀՀԶԾ մոնիթորինգի անձնագրում: